

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը տեղեկատվություն է ներկայացնում 2015 թվականի հունվար-մարտի (այդ թվում՝ մարտի) երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2015թ. մարտի ամսական և 2015թ. հունվար-մարտի (աճողական) արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները

	<i>Չափի միավոր</i>	2015թ. մարտ	2015թ. մարտը 2014թ. մարտի նկատմամբ, %	2015թ. մարտը փետրվարի նկատմամբ, %	2015թ. հունվար-մարտ	2015թ. հունվար-մարտը 2014թ. հունվար-մարտի նկատմամբ, %
Տնտեսական ակտիվության ցուցանիշը ¹	%	x	102.2	113.1	x	102.5
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	<i>մլն.դրամ</i>	104 898.7	104.0	109.2	288 738.3	102.0
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը	<i>մլն.դրամ</i>	31 902.9	105.7	124.0	74 906.4	104.5
Շինարարության ծավալը	<i>մլն.դրամ</i>	22 837.7	99.7	186.6	42 508.8	100.8
Առևտրի շրջանառությունը	<i>մլն.դրամ</i>	173 009.9	94.7	116.2	442 863.6	93.7
Ծառայությունների ծավալը (առանց առևտրի)	<i>մլն.դրամ</i>	89 344.9	102.8	109.7	254 399.9	103.9
Մպառողական գների ինդեքսը	%	x	105.8	99.5	x	105.1
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	<i>մլն.կՎտ.ժ</i>	602.6	96.9	104.0	1 831.2	87.4
Միջին ամսական անվանական աշխատավարձը	<i>դրամ</i>	176 269	109.4	101.6	174 347	110.3
Արտաքին առևտրաշրջանառությունը ²	<i>մլն.դոլար</i>	352.7	70.1	110.3	945.1	71.5
	<i>մլրդ.դրամ</i>	168.7	x	x	451.3	x
<i>այդ թվում՝</i>						
արտահանում ²	<i>մլն.դոլար</i>	104.5	80.4	119.6	267.6	76.9
	<i>մլրդ.դրամ</i>	50.0	x	x	127.8	X
ներմուծում ²	<i>մլն.դոլար</i>	248.2	66.5	106.8	677.5	69.5
	<i>մլրդ.դրամ</i>	118.7	x	x	323.5	x


¹2015թ. հունվար-փետրվարի SU3-ի ցուցանիշները վերանայվել են 2014թ. ՀՆԱ-ի՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների կշիռներով:

²2015թ. հունվար, փետրվար և մարտ ամիսների արտաքին առևտրի ցուցանիշներին ամբողջական չեն՝ պայմանավորված ԵՏՄ երկրների միջև փոխադարձ առևտրի ցուցանիշների ոչ ամբողջական հավաքագրմամբ և դրանք հետագայում ենթակա են ճշգրտման: Տեղեկատվության ոչ ամբողջականությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 23-ի թիվ 447-Ն որոշման 2-րդ հավելվածով հաստատված «Ապրանքների փոխադրման հաշվառման վիճակագրական ձև»-ի՝ դեռևս ոչ բոլոր ռեսպոնդենտների կողմից մաքսային մարմիններին ներկայացման հետ, քանզի դրանց ներկայացման էլեկտրոնային համակարգը դեռևս ամբողջապես գործարկված չէ:

Ստորև բերվում են գծանկարներ (ռադարներ), որոնք նկարագրում են ապրանքների և ծառայությունների արտադրության հիմնական ցուցանիշների փոփոխությունները.

Ապրանքների և ծառայությունների արտադրության հիմնական ցուցանիշների փոփոխությունները 2015 և 2014թթ. մարտ ամիսներին

(նախորդ տարվա մարտի նկատմամբ, %)



Ապրանքների և ծառայությունների արտադրության փոփոխությունները 2015 և 2014 թթ. հունվար-մարտին

(նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %)

